

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Վիկտոր Դալլաքյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

1. Նախագծի նպատակը Հայաստանի Հանրապետության կարմիր գրքում գրանցված կենդանիների որսի արգելումն է: Մինչդեռ, «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետության կարմիր գրքում գրանցված կենդանիների որսը կատարվում է միայն հատուկ թույլտվությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքով թույլատրված միջոցներով, եղանակներով, չափաքանակներով և ժամանակահատվածներով: Նույն հոդվածով սահմանված է նաև, որ որսը՝ ազատ պայմաններում ապրող վայրի կենդանիների հայթայթումն է (որսորդություն, ձկնորսություն, հավաք): Ուստի և, հաշվի առնելով օրենքի հիշյալ դրույթը, գտնում ենք, որ որսը միայն կենդանիների սպանությունը չէ, այլ նաև

հավաքումն է, որը կարող է թույլատրվել, մասնավորապես, գիտական, ուսումնական և առողջապահական ուսումնասիրությունների նպատակներով: Մյուս կողմից, «Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության կարմիր գրքում գրանցված կենդանիների օգտագործումը թույլատրվում է բացառիկ դեպքերում՝ գիտահետազոտական, արհեստական (անազատ ու կիսաանազատ) և բնական պայմաններում դրանց վերարտադրության նպատակով՝ կենդանական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմնի կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

«Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 5-րդ և 7-րդ հոդվածներից Հայաստանի Հանրապետության կարմիր գրքում գրանցված կենդանիների որսի հարաբերությունները կարգավորող դրույթները հանելու դեպքում բաց է մնում դրանց հայթայթման հարաբերությունների կարգավորումը: Ուստի առաջարկում ենք լրամշակել նախագիծը՝ նախատեսելով Հայաստանի Հանրապետության կարմիր գրքում գրանցված կենդանիների որսի բացառություններ:

2. Անազատ և կիսաանազատ պայմաններում վայրի կենդանիներին պահելու և օգտագործելու կարգը ներառելու է նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար պարտականություններ և իրավունքների սահմանափակումներ, ինչը չի բխում Հայաստանի Հանրապետության սահմանադրության 83.5-րդ հոդվածի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի պահանջներից, որոնց համաձայն ֆիզիկական և իրավաբանական անձանց պարտավորությունները և իրավունքները

սահմանափակումները սահմանվում են բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով, ուստի գտնում ենք, որ ազատ և կիսաազատ պայմաններում վայրի կենդանիներին պահելու և օգտագործելու կարգը կարող է սահմանվել միայն օրենքով:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախագիծը ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարար Արամ Հարությունյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«Որսի եւ որսորդական տնտեսության վարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին**

Հոդված 1. «Որսի եւ որսորդական տնտեսության վարման մասին»
Հայաստանի Հանրապետության թիվ ՀՕ-176-Ն օրենքի /այսուհետ` օրենք/ 2-
րդ հոդվածից հանել «այդ թվում` Հայաստանի Հանրապետության Կարմիր
գրքում գրանցված» բառերը:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետի վերջին նախադասությունը
շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«Արգելվում է Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված
կենդանիների որսը»:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածի 4)-րդ կետը շարադրել հետևյալ
բովանդակությամբ.

«4) անազատ եւ կիսաանազատ պայմաններում վայրի կենդանիներին պահելու
եւ օգտագործելու կարգի սահմանումը»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման
օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՈՐՄԻ ԵՎ ՈՐՍՈՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԻՆԱԳԾԻ

Մույն օրինագծի ընդունումը պայմանավորված է Հայաստանի
Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիների
որսն արգելելու անհրաժեշտությամբ:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքի **14**-րդ հոդվածում նշված է, որ
կենդանիների Կարմիր գրքում, մասնավորապես, գրանցվում են
տեղեկություններ հազվագյուտ եւ անհետացող կենդանական տեսակների
մասին: Հետեւաբար այդ կենդանիների որսն ընդհանրապես պետք է
արգելել: